



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԱՅՑԵԼԵՑ  
 ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ**

Ընդառաջելով Վարժարանի տնօրենության հրաւերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 11 Ապրիլի առաւօտուն պաշտօնական այցելութիւն մը տուաւ Հայ Աւետ. Շարլոթ եւ Էլիզ Մերտինեան Վարժարան: Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան, Ս. Նահատակաց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան, եւ Թեմիս Երիտասարդաց Յանձնախումբի ատենապետ՝ Տիար Կրէկ Մարթայեան, որ միաժամանակ Վարժարանիս նախկին սաներէն է:

Վարժարանի մուտքին, Առաջնորդ Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Հովիւ՝ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեանի, Վարժարանի տնօրէն՝ Տիար Յովսէփ Ինճեմիքեանի, Հոգաբարձութեան ներկայ ատենապետ՝ Տոքթ. Հրայր Ադիքեանի, նախկին ատենապետ՝ Հերըլտ Տեմիրճեանի եւ վարժարանի անձնակազմին կողմէ:



Մտերմիկ հանդիպումէ մը ետք, բոլոր ներկաները ուղղուեցան Վարժարանի հանդիսասարահ, ուր տնօրէնին բարի գալստեան խօսքէն ետք, ի պատիւ Առաջնորդ Սրբազան Հօր եւ հիւրերուն՝ գործադրուեցաւ կոկիկ յայտագիր մը, կատարողութեամբ նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտներուն: Յայտագիրը կը բաղկանար հայրենասիրական կտորներէ, շարականներէ ու կրօնական բնոյթի երգերէ:

Բեմ հրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազանը, որ իր քաջալերանքի խօսքը ուղղէ աշակերտներուն: Սրբազանը նախ իր խորունկ գոհունակութիւնը եւ շնորհակալութիւնը յայտնեց տրուած հրաւերին եւ քաղցր հիւրընկալութեան համար: Ապա արտայայտեց իր շնորհաւորութիւնները տնօրէնին եւ ուսանողներուն՝ տարուած աշխատանքին համար ու բարգաւաճում մաղթեց վարժարանին, օրհնեց վաստակը վարժարանի հիմնադիրներուն, նաեւ գնահատեց ուսուցիչներուն նուիրումը: Ան վեր առաւ այս վարժարանին այն արժանիքը, որ կը կայանայ Աստուածաշունչը իբրեւ ուղեցոյց ճանջնալու անոր կոչումին մէջ, եւ կոչ ուղղեց աշակերտներուն, որ իրենց ուսումով եւ նուիրուածութեամբ դառնան մեկական շնորհալի գաւակները Հայ Եկեղեցիին ու Հայ ազգին:

Յանուն Մերտիսեան Վարժարանի մեծ ընտանիքին, շնորհակալութեան խօսքով հանդես եկաւ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեանը, յատկապէս շեշտելով Արեւմտեան Թեմի եւ Աւետարանական Հայ Համայնքին միջեւ սերտ ու սիրալիիր կապերը:

Առաջնորդ Սրբազանը եւ հոգեւոր Հայրերը աշակերտներուն համար երգեցին Զրիստոսի Ս. Յարութեան նուիրուած շարականը՝ «Այսօր Յարեաւ»ը: Այս Սրբազան Հայրը պահպանիչով օրհնեց Մերտիսեան վարժարանի տնօրէնութիւնը, հոգաբարձութիւնը, ուսուցչական կազմը եւ ուսանողութիւնը: Հաւաքական »Հայր Մեր«ի երգեցողութենէն ետք, Սրբազան Հայրը իրաքանչիւր աշակերտի տուաւ Զրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակին կողմէ պատրաստուած պատկերազարդ երկլեզու աղօթքներ, որպէսզի միշտ իրենց հետ ունենան:

## **PRELATE VISITS C & E MERDINIAN ARMENIAN EVANGELICAL SCHOOL**

On the morning of Wednesday, April 11<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visited Charlotte & Elise Merdinian Armenian Evangelical School, accompanied by Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, Rev. Razmig Khatchadourian, pastor of Holy Martyrs Church, and Merdinian alumnus and current ACYA chairman Mr. Gregory Martayan.



Upon his arrival the Prelate was welcomed by Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of North America, Principal Mr. Hovsep Inejikian, Chairman of the Board Dr. Hrair Atikian, previous Chair Mr. Harold Demirjian, and the school administration.

After a brief meeting, the Prelate and guests headed to the school auditorium where the student assembly took place consisting of performances of nationalistic and religious songs. During his remarks, the Prelate expressed his appreciation for the invitation extended to him and the warm reception, and commended the principal, teachers, and students for their hard work and dedication.

Rev. Matossian expressed thanks on behalf of the school, emphasizing the close bond between the Western Prelacy and the Armenian Evangelical community.

Following the singing of an Easter hymn, the Prelate blessed the administration and students. The assembly came to a close with the collective singing of the Lord's Prayer and the presenting of prayer cards to the students by the Prelate.

